Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 110 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ COVID-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ինչպես ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության, այնպես էլ Հայաստանյան «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական է համավարակների և այլ աղետների պատճառով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին և երեխաներին մարդասիրական և հոգեբանա-սոցիալական անմիջական աջակցության ցուցաբերումը: Այս ուղղությամբ կազմակերպությունը ծրագիր է իրականացնում՝ ՀՀ Երևան քաղաքի տարածքում COVID-19 համավարակի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների և նրանց երեխաների ծանր սոցիալական և հոգեբանական վիճակը փոքր-ինչ մեղմելու նպատակով: Այս ծրագիրն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների և Միասնական սոցիալական ծառայության հետ սերտ համագործակցությամբ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը	ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպություն (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Ինսբրուկ, Ավստրիա)
4.	Ծրագիրը կատարողը	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ (ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան քաղաքում, այն առնչվում է սոցիալական բնագավառին:
6.	Ծրագրի բյուջեն	58,559,842 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Երևան քաղաքում 100 ընտանիքներ և 200 երեխաներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի փետրվարի 15-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծրագրի շահառուներին նյութական աջակցության տրամադրում ընդհանուր 24,205,700 ՀՀ դրամ արժեքով, այդ թվում՝ 1.1. սննդի փաթեթի տրամադրում՝ 17,765,700 ՀՀ դրամ; 1.2. առաջին անհրաժեշտության ապրանքներ սուր ճգնաժամի մեջ հայտնված նորածինների և երեխաների համար (քնելու, լողալու, զբոսնելու համար անհրաժեշտ պարագաներ և այլն)՝ 6,440,000 ՀՀ դրամ: 2. Ծրագրի շահառուներին առողջապահական աջակցության տրամադրում ընդհանուր 8,572,222 ՀՀ դրամ արժեքով, այդ թվում՝ 2.1. նորածիններին և երեխաներին հիգիենայի փաթեթների, խնամքի միջոցների տրամադրում՝ 3,908,454 ՀՀ դրամ; 2.2. առաջնային առողջության պահպանման նպատակով COVID-19 վիրուսից պաշտպանական (դիմակներ, ձեռնոցներ), ախտահանիչ նյութեր (ալկոգել, անտիսեպտիկ նյութեր) և պարագաներ՝ 4,263,768 ՀՀ դրամ; 2.3. COVID-19-ի հետ կապված առողջության խնդիրների վերաբերյալ դասընթացներ և քննարկումներ՝ 400,000 ՀՀ դրամ: 3. Ծրագրի շահառուներին կրթական աջակցության տրամադրում ընդհանուր 3,028,760 ՀՀ դրամ արժեքով, այդ թվում՝ 3.1. մասնագիտական դասընթացների կամ վերապատրաստումների վճարներ (շահառուների համար)՝ 2,368,760 ՀՀ դրամ; 3.2. դպրոցական պարագաներ և դասագրքերի վճարների տրամադրում՝ 660,000 ՀՀ դրամ: 4. Նյութեր հոգեբանական-սոցիալական գործունեության համար (դիդակտիկ նյութեր, թուղթ, գրիչ և այլ անհրաժեշտ պարագաներ)՝ 200,000 ՀՀ դրամ: 5. Ծրագրի շահառուներին տնտեսական կայունացման աջակցության տրամադրում (հիմնական գործիքներ/սարքավորումներ ընտրված բիզնեսի կամ մասնագիտական գործունեության համար)՝ 2,368,760 ՀՀ դրամ: 6. Ծրագրի շահառուներին իրավաբանական աջակցության տրամադրում՝ 404,400 ՀՀ դրամ: 7. Ծրագրի շահառու ընտանիքներին և նրանց համայնքի անդամներին COVID-19 ռիսկերի, ինքնապաշտպանության ձևերի այլ խնդիրների լուծման վերաբերյալ մեթոդական և տեղեկատվական թերթիկների տպագրում և տրամադրում՝ 1,000,000 ՀՀ դրամ: 8. Ծրագրի շահառու ընտանիքների տունայց կատարելու նպատակով այլ տրանսպորտային միջոցների (տաքսի ծառայություն) վճարներ՝ 360,000 ՀՀ դրամ:

		9. Ծրագրի անձնակազմի աշխատավարձեր՝ կազմում է 15,360,000 ՀՀ դրամ (թվով 5 աշխատակից՝ 3 սոցիալական աշխատողներ, 1 հոգեբան, 1 համակարգող), (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում), այդ թվում՝ 9.1. սոցիալական աշխատողներ (թվով 3 աշխատակից)՝10,800,000 ՀՀ դրամ; 9.2. հոգեբան (թվով 1 աշխատակից)՝3,600,000 ՀՀ դրամ; 9.3. սոցիալական աշխատողների և հոգեբանի աշխատանքի համակարգող (թվով 1 աշխատակից)՝ 960,000 ՀՀ դրամ: Կազմակերպական ծախսերը՝ նշված ժամանակաշրջանի համար կազմում են 3,060,000 ՀՀ դրամ, որից՝ 1. Աշխատակազմի աշխատավարձ՝ (հաշվապահ)՝ 720,000 ՀՀ դրամ: 2. Գրենական պիտույքներ, գրասենյակային պարագաներ, քարթրիջի լիցքավորման ծախսեր՝420,000 ՀՀ դրամ: 3. Հեռահաղորդակցության ծախսեր՝ 480,000 ՀՀ դրամ: 4. Տրանսպորտային ծախսեր և փոխադրման ծախսեր (ծրագրի իրականացման նպատակով օգտագործվող մեքենայի վառելիքի, պահպանման և ապահովագրության գծով)՝ 1,440,000 ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Մանդի փաթեթի ձեռքբերում՝ 17,765,700 ՀՀ դրամ 2. Առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերում՝ սուր ճգնաժամի մեջ հայտնված նորածինների և երեխաների համար (քնելու, լողալու, զբոսնելու համար անհրաժեշտ պարագաներ և այլն)՝ 6,440,000 ՀՀ դրամ: 3. Նորածիններին և երեխաներին հիգիենայի փաթեթների, խնամքի միջոցների ձեռքբերում՝ 3,908,454 ՀՀ դրամ: 4. Առաջնային առողջության պահպանման նպատակով COVID-19 վիրուսից պաշտպանական (դիմակներ, ձեռնոցներ), ախտահանիչ նյութերի (ալկոգել, անտիսեպտիկ նյութեր) և պարագաների ձեռքբերում՝ 4,263,768 ՀՀ դրամ: 5. COVID-19-ի հետ կապված առողջության խնդիրների վերաբերյալ դասընթացների և քննարկումների հետ կապված ծառայությունների ձեռքբերում՝ 400,000 ՀՀ դրամ: 6. Շահառուների համար մասնագիտական դասընթացների և վերապատրաստումների կազմակերպման հետ կապված ծառայությունների ձեռքբերում՝ 2,368,760 ՀՀ դրամ: 7. Շահառուների համար դպրոցական պարագաների և դասագրքերի ձեռքբերում՝ 660,000 ՀՀ դրամ: 8. Հոգեբանական-սոցիալական գործունեության համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում (դիդակտիկ նյութեր, թուղթ, գրիչ և այլ անհրաժեշտ պարագաներ)՝ 200,000 ՀՀ դրամ:

		9. Շահառուներին տնտեսական կայունացման համար հիմնական գործիքների/սարքավորումների ձեռքբերում՝ 2,368,760 ՀՀ դրամ: 10. Շահառու ծնողներին և երեխաներին իրավաբանական աջակցություն տրամադրելու հետ կապված ծառայությունների ձեռքբերքում՝ 404,400 ՀՀ դրամ: 11. Շահառու ընտանիքներին և նրանց համայնքի անդամներին COVID-19 ռիսկերի, ինքնապաշտպանության ձևերի այլ խնդիրների լուծման վերաբերյալ մեթոդական և տեղեկատվական թերթիկների տրամադրման նպատակով տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 ՀՀ դրամ: 12. Շահառու ընտանիքների տունայց կատարելու նպատակով այլ տրանսպորտային միջոցների ծառայությունների ձեռքբերում՝ 360,000 ՀՀ դրամ: 13. Գրենական պիտույքների, գրասենյակային պարագաների և քարթրիջի լիցքավորման ծառայության ձեռքբերում՝ 420,000 ՀՀ դրամ: 14. Հեռահաղորդակցության ծախսերի ձեռքբերում՝ 480,000 ՀՀ դրամ: 15. Ծրագրի իրականացման նպատակով անհրաժեշտ ընթացիկ տրանսպորտային և փոխադրման ծախսեր՝ 1,440,000 ՀՀ դրամ արժեքով, այդ թվում՝ 15.1. վառելանյութի ձեռքբերում՝ 1,080,000 ՀՀ դրամ; 15.2. ապահովագրական ծառայությունների ձեռքբերում՝ 60,000 ՀՀ դրամ; 15.3. սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերում՝ 300,000 ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը՝ նշված ժամանակաշրջանի համար կազմում են 3,060,000 ՀՀ դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 5.22 տոկոսը: Այդ թվում. 1. Աշխատակազմի աշխատավարձ՝ (հաշվապահ)՝ 720 000 ՀՀ դրամ; 2. Գրենական պիտույքներ, գրասենյակային պարագաներ, քարթրիջի լիցքավորման ծախսեր՝ 420,000 ՀՀ դրամ: 3. Հեռահաղորդակցության ծախսեր՝ 480,000 ՀՀ դրամ: 4. Ծրագրի իրականացման նպատակով անհրաժեշտ ընթացիկ տրանսպորտային ծախսեր՝ 1,440,000 ՀՀ դրամ արժեքով, այդ թվում 4.1. վառելանյութի ձեռքբերում՝ 1,080,000 ՀՀ դրամ, 4.2. ապահովագրական ծախսեր՝ 60,000 ՀՀ դրամ, 4.3. սպասարկման և վերանորոգման ծախսեր՝ 300,000 ՀՀ դրամ:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, Երևանի քաղաքապետարանի, Միասնական սոցիալական ծառայության, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

02.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ